

«Լանթերման-Պետրիս-Շորթի (LPS) օրենքը» հասկանալը

Չրատ.՝ #5608.10-Armenian

Գլուխ 1. Հարկադիր բուժմանն առնչվող ձերբակալություններ

Կալիֆորնիայի օրենքը ոստիկաններին և հոգեկան առողջության որոշ մասնագետների թույլ է տալիս Ձեզ կալանավորել, եթե նրանք կարծում են, որ Ձեր հոգեկան առողջության պատճառով հավանական է, որ Դուք որոշակի տեսակի վնաս կպատճառեք այլ անձանց կամ ինքներդ ձեզ: Սա սովորաբար հիշատակվում է որպես «5150 ձերբակալություն», որն անվանվել է այն կանոնակարգի անվամբ, որն այն լիազորում է: Բարեկեցության և հաստատությունների մասին օրենսգիրք (WIC, Welfare & Institution Code) § 5150:

Այս օրենքի ներքո, եթե Դուք բավարարեք որոշակի չափանիշների, ապա կարող եք մինչև 72 ժամ ձերբակալված մնալ: Սա քրեական ձերբակալությունն չէ: Այդ ժամանակահատվածի ընթացքում հոգեկան առողջության մասնագետները Ձեզ կքննեն՝ որոշելու, թե արդյոք Դուք կարող եք ապահով կերպով ազատ արձակվել, արդյոք կամավոր ծառայությունները պատշաճ կլինեն կամ արդյոք Դուք լրացուցիչ բուժման կարիք ունեք: WIC §§ 5151, 5152: Եթե մասնագետը որոշի, որ Դուք լրացուցիչ բուժման կարիք ունեք, և եթե նա նաև վստահ լինի, որ Դուք կամ չեք ցանկանում, կամ ի վիճակի չեք կամավոր բուժումն ընդունել, ապա հնարավոր է, որ նա ձերբակալման մեկ այլ հայտ ներկայացնի՝ մինչև 14 լրացուցիչ օր ժամկետով: WIC § 5250:

Ձերբակալման չափանիշներ

Ոստիկանը կամ հոգեկան առողջության մասնագետը չեն կարող Ձեզ ձերբակալել պարզապես հոգեկան հիվանդություն ունենալու պատճառով: Դուք կարող եք կալանավորվել միայն այն դեպքում, եթե ոստիկանը վստահ է, որ Ձեր հոգեկան հիվանդությունը հավանաբար կարող է որոշ տեսակի վնաս պատճառել: WIC § 5150.05: Ոստիկանը կամ Ձեզ բուժող անձը կարող է Ձեր հոգեկան առողջության պատմությունը հաշվի առնել, բայց Ձեզ չեն կարող ձերբակալել լոկ Ձեր անամնեզի վրա հիմնվելով: Հոգեբուժական ձերբակալման ենթարկվելու համար Դուք պետք է բավարարեք ստորև տրված չափանիշներից առնվազն մեկին՝ որպես Ձեր հոգեկան առողջության խնդրի արդյունք:

Ինքնիրեն վտանգ պատճառելը

Շատ հաճախ, մեկը, ով ինքնիրեն վտանգ ներկայացնող է համարվում, վախեցրել կամ փորձել է ինքն իրեն վնասել կամ ինքնասպան լինել:

Այլոց վտանգ պատճառելը

Այլոց վնասելու համար արված սպառնալիքները կամ փաստացի փորձերը ամենահաճախ հանդիպողներն են՝ այս չափանիշը բավարարելու համար:

Ծանր հաշմանդամություն

«Ծանր հաշմանդամ» լինել նշանակում է, որ անձը հոգեկան առողջության խնդրի պատճառով այլևս ի վիճակի չէ հոգալ իր սնունդը, հագուստը կամ կացարանը: WIC § 5008(h): Անձը կարող է ծանր հաշմանդամ համարվել, եթե, օրինակ, նա այլևս բավարար չափով չի ուտում՝ գոյատևելու համար, կամ նա այլևս ի վիճակի չէ կատարել տնային գործերը:

Ծանր հաշմանդամությանը վերաբերող լրացուցիչ տեղեկություններ

Անձն, ով ի վիճակի չէ իր մասին հոգ տանել, բայց կարող է ապահով կերպով ապրել երրորդ անձի կամավոր օգնությամբ, հավանաբար «ծանր հաշմանդամ» չի համարվի: § 5350(3): *St'u uuu* «*Conservatorship of Early*»-ը, 35 Cal. 3d 244, 253, 673 P.2d 209 (1983) (մեջբերումը բաց է թողնվել) «...հաշմանդամների խնամակալության նշանակումը պետք է կատարվի միայն այն դեպքերում, երբ այն իսկապես անհրաժեշտ է»: Այս նպատակին հասնելու համար պետք է հաշվի առնել երրորդ կողմի աջակցության փաստացի մատչելիությունը» և «*O'Connor v. Donaldson*»-ի 422 U.S 563, 575, 95 S. Ct. 2486, 2493–94, 45 L. Ed. 2d 396 (1975) «...մինչդեռ Նահանգը կարող է հավանաբար ազատագրել անձին՝ նրան վնասից պաշտպանելու համար, բանտարկությունը հազվադեպ է անհրաժեշտ պայման հանդիսանում՝ ապրելու չափանիշները բարձրացնելու համար ազատության մեջ ապահով կերպով ինքնուրույն կամ ընտանիքի կամ ընկերների օգնությամբ գոյատևելու ընդունակ անձանց համար»:

Անտուն լինելն ինքնին հավանաբար չի բավարարի «ծանր հաշմանդամ» լինելու չափանիշներին: Սակայն անձն, ով չի կարող կամ չի փորձի սնունդ կամ տանիք գտնել՝ որպես հոգեկան հիվանդության ուղղակի արդյունք, ավելի հավանական է, որ կհամարվի ծանր հաշմանդամ: *St'u* «*Conservatorship of Chambers*»-ը, 71 Cal. App. 3d 277, 284, 139 Cal. Rptr. 357 (Ct. App. 1977) («...[ծանր հաշմանդամ] տերմինը հիմնավորված կերպով հստակեցված է՝ բացառելու անսովոր կամ անհամապատասխան ապրելակերպերը: Այն նշանակում է խնամակալության կարիք ունեցող անձի անկարողությունը կամ մերժումը՝ հոգալու սննդին, հագուստին և կացարանին առնչվող հիմնական անձնական կարիքները»:)

Բացի այդ, թեև անցյալի գործողությունները կարող են ի նկատի առնվել, անձը ծանր հաշմանդամ չի համարվում, եթե նա ներկայումս վտանգ չի ներկայացնում ինքն իրեն համար՝ ինքնախնամք տրամադրելու անկարողության պատճառով: *St'u* «*Conservatorship of Benevuto*»-ու, 180 Cal.App.3d 1030 (1986): Ապագա վնասի հավանականությունը նույնպես կարող է բավարար չլինել՝ կատարման չափանիշները բավարարելու համար: *Id* at 1034 n.2. («Եթե LPS խնամակալությունը կարող է

վերանշանակվել հիվանդության ապագա հավանական կրկնության համար, ինսամակալության կարիք ունեցող շատ անձինք, ում մոտ հիվանդությունը չի կրկնվի, ազատությունից կզրկվեն՝ հիմնվելով հավանական հոռետեսության վրա: Այս ծախսը երաշխավորված չէ օրենքով՝ նախատեսված ընթացակարգերի տեսանկյունից, որոնք մատչելի են՝ հրատապ LPS ինսամակալություն խնդրելու, եթե պահանջվում է»:

Ծանոթագրություն. Նմանատիպ օրենքը ոստիկաններին (կամ նշանակված այլ մարդկանց» թույլ է տալիս Ձեզ ձերբակալել, եթե նրանք կարծում են, որ Դուք բավարարում եք վերոնշյալ չափանիշները՝ քրոնիկական հարբեցողության պատճառով: WIC § 5170:

72-ժամյա «5150» ձերբակալում

Ձերբակալության սկզբում Դուք պետք է տարվեք հոգեբուժարան կամ հոգեկան առողջության այլ հաստատություն, որտեղ բժշկական մասնագետները կարող են Ձեզ գնահատել: Հիվանդանոցում եղած ժամանակ աշխատակզմը կորոշի, թե արդյոք կարիք կա ավելի երկար ձերբակալություն խնդրել բուժման համար կամ Դուք կարող եք ապահով կերպով ազատ արձակվել:

Հիվանդանոցը կարող է Ձեզ 72 ժամից շուտ ազատ արձակել: WIC § 5152: Հիվանդանոցը պետք է Ձեզ ավելի շուտ ազատ արձակի, եթե նրանք կարծում են, որ Դուք այլևս գնահատման կամ բուժման կարիք չունեք:

72 ժամվա վերջում հետևյալ մի քանի գործողություններից մեկը տեղի կունենա.

- Դուք արձակված կլինեք, կամ
- Դուք կմուտքագրվեք որպես կամավոր հիվանդ, կամ
- Դուք 14 օրով հարկադիր ձերբակալման մեջ կգտնվեք [կոչվում է «ինտենսիվ բուժման վկայական» (certification for intensive treatment)], կամ
- Ձեզ ինսամակալ կնշանակվի: *Տե՛ս* «Գլուխ 2. LPS ինսամակալություններ»:

Ձեր իրավունքները 72-ժամյա ձերբակալության ընթացքում

Հարկադիր ձերբակալությունը քրեական կալանավորում չէ: Դուք որոշակի իրավունքներ ունեք, երբ ձերբակալվում և ազատագրվում եք:

- **Սեփական գույք.** Անձը, ով Ձեզ ձերբակալում է, պետք է պատշաճ նախազգուշական միջոցառումներ ձեռնարկի՝ Ձեր գույքը պաշտպանելու համար: Նա պետք է Ձեզ թույլ տա որոշ անձնական իրեր հավաքել՝ Ձեզ հետ վերցնելու համար: WIC § 5210:
- **Հեռախոսազանգ.** Ձեզ ձերբակալող անձը պետք է ծանուցի Ձեզ, որ Դուք կարող եք հեռախոսազանգ կատարել՝ ինչ-որ մեկին տեղյակ պահելու, թե ուր եք տարվել: WIC § 5150(g)(1):

- **Ծանուցում և գնահատում.** Ձեզ պետք է տրվի այն միջնորդագրի պատճենը, որտեղ բացատրվում է, թե ինչու եք ձերբակալվել գնահատման համար: WIC § 5208: Այս միջնորդագիրը պետք է պարունակի հայցվորի անունը և հասցեն, Ձեր անունը և այլ նույնականացման տվյալներ, ինչպես օրինակ՝ հասցե, սեռ և զբաղվածություն, փաստեր, որոնք օգտագործվում են որպես միջնորդագրի հիմք, որևէ մեկի անունը, ով պատասխանատու է համարվում Ձեր խնամքի համար, և որևէ այլ տեղեկատվություն, որը կարող է դատարանը պահանջել: WIC § 5204: Մինչ Դուք ձերբակալված եք, հիվանդանոցը պետք է Ձեզ գնահատի: Այն անձը, ով Ձեզ կգնահատի, պետք է հաշվի առնի բժշկական, հոգեբանական, կրթական, սոցիալական, ֆինանսական և իրավաբանական իրավիճակը: WIC § 5008:
- **Չակապսիխոտիկ դեղեր.** Դուք իրավունք ունեք ընդունել կամ մերժել հակապսիխոտիկ դեղամիջոցները: Ձեզ այս դեղամիջոցները կարող են տրվել միայն այն դեպքում, երբ բժիշկը Ձեզ գրավոր և բանավոր տեղեկություններ է հաղորդել ազդեցությունների և կողմնակի ազդեցությունների մասին, իսկ Դուք տվել եք Ձեր տեղեկացված համաձայնությունը: Սակայն, Ձեզ կարող են հարկադրաբար դեղամիջոցներ տալ որոշակի արտակարգ իրավիճակներում: Ձեզ նաև կարող են հարկադրաբար դեղամիջոցներ տալ, եթե լսումից հետո դատավորը որոշի, որ Դուք դեղամիջոցն ընդունելու համար որոշում կայացնելու ընդունակ չեք: WIC § 5332:

Վերանայման լսման և 14-օրյա «5250» ձերբակալման հաստատում

Եթե բուժող հաստատությունը ցանկանում է Ձեզ 72 ժամից ավելի ձերբակալված պահել, Դուք Վերանայման լսման հաստատման իրավունք ունեք: Այդ ժամանակ Դուք գրավոր ծանուցման իրավունք ունեք առ այն, որ ձերբակալված եք: Այս ծանուցումը պետք է ներառի այն առանձնահատուկ պատճառները, որոնց համար Դուք ձերբակալված եք: WIC § 5251: Դուք նաև հիվանդների իրավունքների փաստաբանների աջակցության իրավունք ունեք: Նա կօգնի Ձեզ հասկանալ Ձեր իրավունքները և կպաշտպանի դրանք: WIC § 5325. § 5325(h): Այս լսումը պետք է կատարվի չորս օրվա ընթացքում՝ 14-օրյա ձերբակալման հաստատումից սկսած, եթե Դուք կամ Ձեր փաստաբանը հետաձգում չեք խնդրել: WIC §§ 5250, 5254: Կարիք չկա, որ Դուք այս լսումը խնդրեք, քանի որ այն ինքնաբերաբար նախատեսվում է Ձեզ համար:

Լսմանը չեզոք կողմը կվերանայի, թե արդյոք բավարար չափով փաստեր կան [կոչվում է հավանական պատճառ (probable cause)]՝ շարունակելու Ձեր կամքին հակառակ Ձեզ պահելը: Այս լսումն ի օգուտ Ձեզ է, իսկ հիվանդանոցը Ձեզ պահելու պատասխանատվության համար հիմնավորում ունի: Ձեզից չի պահանջվում ապացուցել, թե ինչու չպետք է ձերբակալվեք, բայց Ձեզ թույլատրվում է ապացույցներ ներկայացնել՝ ցույց տալու, թե ինչու հիվանդանոցը չպետք է Ձեզ այլևս ձերբակալված պահի: Եթե լսումն անցկացնող կողմը որոշի, որ բավարար չափով ապացույցներ չկան, որ Դուք պետք է ձերբակալված մնաք, ապա հիվանդանոցը պետք է Ձեզ ազատ արձակի: WIC § 5256:

Ձեր իրավունքները՝ վերանայման լսման հաստատմանը

Դուք որոշակի իրավունքներ և պաշտպանության միջոցներ ունեք վերանայման լսման հաստատման ժամանակ (Certification Review Hearing):¹ Դրանք ներառում են՝

- Փաստաբանից կամ այլ դատապաշտպանից օգնություն ստանալու իրավունք.
- Ձեր իսկ անունից փաստեր ներկայացնելու իրավունք.
- Ապացույցներ ներկայացնող անձանց հարցեր տալու իրավունք՝ ի պաշտպանություն Ձեր հաստատման.
- Պատճառ խնդրանքներ ներկայացնելու իրավունք՝ բուժման հաստատությունից անձանց լսմանը հրավիրելու համար.
- Եթե Ձեզ դեղորայք տրվի Ձեր լսման 24 ժամվա ընթացքում, ապա լսումն անցկացնող անձը կտեղեկացվի այդ փաստի մասին, որ Դուք դեղորայք եք ընդունել, ինչպես նաև Ձեզ վրա թողած դրա հավանական հետևանքների մասին:

Ձեր լսումը հավանաբար ավելի քիչ պաշտոնական կլինի, քան շատ դատական լսումները: Սա արվում է մարդկանց խրախուսելու բացահայտ կերպով խոսել հաստատման մասին:

Հաստատության անձնակազմը պետք է ծանուցի ընտանիքի անդամներին և այլ մարդկանց, ում Դուք խնդրել եք, լսման ժամի և վայրի մասին: Անձնակազմը նաև պետք է Ձեզ տեղեկացնի, որ Դուք իրավունք ունեք խնդրել, որ նրանք այս տեղեկատվությունը ընտանիքի որևէ անդամի կամ այլ մեկի չփոխանցեն, ում որ Դուք չեք ցանկանում որ մասնակցի լսմանը:

Եթե Դուք չեք ցանկանում բուժում ստանալ, պետք է այդ մասին բացահայտ խոսեք: Թեև որոշ դեպքերում անձը կարող է դիմադրել բուժմանը հոգեկան խնդրի պատճառով, Ձեր բուժմանը մերժում արտահայտելն ինքնին խնդրի ապացույց չէ կամ պարտավորության կարիք չէ: Այլ կերպ ասած, բուժում չստանալու Ձեր ցանկությունը՝ առանց այլ ապացույցի, բավարար չէ՝ ապացուցելու, որ Դուք բուժման կարիք ունեք:

«Անձին ապօրինի բանտարկությունից պաշտպանելու մասին» լսում խնդրելու իրավունքը

¹ Եթե Դուք ցանկանում եք տեսնել փաստացի օրենսդրական ակտերը, որտեղ ներկայացված են այս իրավունքները, դրանք կարող եք գտնել WIC § 5256.4.-ի ներքո: [«Վերադառնալ հիմնական փաստաթղթին»](#)

Անձին ապօրինի բանտարկությունից պաշտպանելու մասին լսում թույլ տալը Ձեզ հնարավորություն է ընձեռում վիճարկել Ձեր ձերբակալումը՝ պահանջելով, որ Դուք անօրինաբար եք ձերբակալվել: Այս լսումն ինքնաբերաբար չի կատարվում: Դուք պետք է առանձնահատուկ խնդրանք ներկայացնեք դրա համար՝ հիվանդանոցի բուժող անձնակազմի մեկ անդամին կամ հիվանդների իրավունքների պաշտպանին այդ մասին ծանուցելով: Եթե Դուք լսում խնդրեք, Դուք դատարանի կամ մասնավոր իրավաբանական խորհրդատուի կողմից ներկայացված լինելու իրավունք կունենաք: Բայց իրազեկ եղեք, որ **անձին ապօրինի բանտարկությունից պաշտպանելու մասին լսումը կարող է հանգեցնել հետաձգման կամ այլ հետևանքների:** Նախքան լսում խնդրելն անպայման խորհրդակցեք փաստաբանի կամ հիվանդների իրավունքների դատապաշտպանի հետ՝ հնարավոր հետևանքների մասին: WIC §§ 5254.1, 5275-5276:

14-օրյա ձերբակալության հետևանքները

14-օրյա ձերբակալության վերջում մի շարք հնարավոր հետևանքներ կարող են լինել.

- Դուք կարող եք նախքան 14 օրը լրանալն ազատ արձակվել: Դուք կարող եք ազատ արձակվել անձնակազմի կողմից կամ վերանայման լսման հաստատմանը կամ անձին ապօրինի բանտարկությունից պաշտպանելու մասին լսմանը (սա այն լսումն է, երբ Դուք դատավորին խնդրում եք վերանայել Ձեր ձերբակալության օրինականությունը): Օրինակ, դատավորը կարող է որոշել ազատ արձակել Ձեզ, եթե Ձեր իրավունքները ոտնահարվել են ձերբակալության հանգեցնող գործընթացի ընթացքում) կամ
- Դուք կմուտքագրվեք որպես կամավոր հիվանդ, կամ
- Եթե Ձեզ բուժող անձը որոշի, որ Դուք ավելի շատ բուժման կարիք ունեք, Դուք մեկ այլ ժամկետով կձերբակալվեք:

Եթե Ձեզ բուժող անձը որոշի, որ Դուք բուժման համար ավելի երկար պետք է ձերբակալված մնաք, ապա ձերբակալության տևողությունը կախված կլինի նրանից, թե ինչու եք Դուք ձերբակալված մնում: Ձերբակալության յուրաքանչյուր տեսակի դեպքում Դուք պատշաճ իրավական գործընթացի իրավունքներ կունենաք:

Եթե Դուք շարունակեք ինքներդ Ձեզ համար վտանգավոր համարվել, ապա Ձեզ համար մեկ այլ 14-օրյա ձերբակալում կվերահաստատվի: WIC § 5260:

Եթե Դուք շարունակեք այլոց համար վտանգավոր համարվել, դատարանը կարող է 180-օրյա հետհաստատման ձերբակալություն սահմանել Ձեզ համար: Այս ձերբակալությունը կարող է վերանշանակվելի լինել: WIC § 5301:

Եթե Դուք շարունակեք ծանր հաշմանդամ համարվել, ապա մի քանի հնարավոր հետևանքներ կարող են լինել.

- Ձեր նկատմամբ կարող է սահմանվել 30-օրյա ձերբակալության ժամկետ՝ լրացուցիչ ինտենսիվ բուժման համար, եթե այն Ձեր վարչաշրջանում կիրառելի է: WIC § 5270 և հետևյալը: Կամ
- Ձեր նկատմամբ կարող է նշանակվել ժամանակավոր խնամակալություն (Temporary Conservatorship), իսկ հետո ամբողջական մեկամյա խնամակալություն, որը վերանշանակվելի է: WIC §§ 5352.1, 5361. Այս դեպքում խնամակալը կարող է իրավունք ստանալ որոշակի որոշումներ կայացնել Ձեր փոխարեն, այդ թվում այն, թե որտեղ պետք է Դուք ապրեք և Ձեր դրամն ինչպես պետք է ծախսվի: WIC §§ 5350, 5352: Կամ
- Որոշ հանգամանքներում 30-օրյա ձերբակալությունից հետո կարող են ներկայացվել խնամակալության փաստաթղթերը: Այս դեպքում ժամանակավոր խնամակալությունը զուգահեռաբար կշարունակվի (միևնույն ժամանակ) 30-օրյա ձերբակալության հետ: Ոչ բոլոր վարչաշրջանները պարտադիր կկիրառեն 30-օրյա ձերբակալությունը: Ձեր վարչաշրջանի հիվանդների իրավունքների դատապաշտպանից ճշտեք՝ պարզելու, թե արդյոք Ձեր վարչաշրջանը կիրառում է: WIC § 5256: Դուք նաև պետք է կարդաք «Գլուխ 2. LPS խնամակալություններ»:

«Երկարատև ձերբակալությունից խոսափելու հուշումներ» բաժինը:

Բուժման համար ազատազրկվելը կարող է դժվար փորձություն լինել: Թեև Դուք հետևանքի հանդեպ ամբողջական վերահսկողություն չունեք, հետևյալ գործողությունները կարող են օգնել՝ ցույց տալու, որ Դուք լրացուցիչ բուժման կարիք չունեք:

Եթե Դուք ձերբակալված եք ինքներդ Ձեր հանդեպ վտանգ ներկայացնելու պատճառով.

Փորձեք Ձեզ վնասող ոչինչ չանել, և ինքներդ Ձեզ վնասելու ոչ մի սպառնալիք մի ներկայացրեք: Այն անձը, ով Ձեզ գնահատում է, սովորաբար կստուգի՝ պարզելու, թե արդյոք Դուք դադարեցրել եք որևէ վնասակար վարքագիծ, **ԵՎ** եթե Դուք ազատ արձակվեք, արդյոք կրկին չեք փորձի ինքներդ Ձեզ վնասել: Օգտակար կլինի անձնակազմին տեղյակ պահել, եթե Դուք բժիշկ ունեք, ում կարող եք այցելել ազատ արձակվելուց հետո կամ դեղամիջոցներ, որոնք մատչելի կլինեն Ձեզ՝ բուժելու այն ախտանիշները, որոնք կհանգեցնեն որևէ վնասակար վարքագծի:

Եթե Դուք ձերբակալվել եք այլոց համար վտանգ ներկայացնելու պատճառով.

Ազատազրկված լինելը կարող է տխրեցնող և սթրեսային լինել, բայց փորձեք անհամբեր կամ կռվարար չլինել այլ հիվանդների կամ անձնակազմի հանդեպ: Մի՛ զայրացրեք և թույլ մի՛ տվեք, որ սադրանքների ենթարկվեք: Որևէ մեկին մի՛ հրեք, մի՛ ճանկեք կամ մի՛ հարվածեք: Փորձեք չդիպչել որևէ մեկի, եթե անձնակազմն այդպես չի խնդրել:

Եթե Դուք ձերբակալվել եք ծանր հաշմանդամություն ունենալու պատճառով.

Այն անձը, ով Ձեզ գնահատում է, կփորձի պարզել, թե արդյոք Դուք ի վիճակի եք Ձեր հիմնական կարիքները հոգալ: Մինչ Դուք հիվանդանոցում եք, օգտագործեք այս ժամանակը՝ ինքներդ Ձեր մասին հոգ տանելու համար: Կերեք այն սնունդը, որը տրամադրվում է: Փորձեք մի փոքր քնել: Եթե

Դուք առանց հազուստի եք եկել կամ Ձեր հազուստները վերցվել են Ձեզնից, հազեք այն հազուստները, որոնք հիվանդանոցը տրամադրել է Ձեզ: Օգտվեք լոգասենյակից և ցնցուղից՝ լողանալու և հիգիենայի Ձեր հիմնական կարիքները հոգալու համար:

Անձնակազմին տեղյակ պահեք, թե արդյոք Դուք օգտվում եք Ձեր սեփական սննդից, հազուստից և կացարանից: Եթե դրանք մատչելի չեն, Դուք կարող եք փորձել անձնակազմին տեղյակ պահել, որ Դուք առնվազն գիտեք, թե ինչպես պետք է սնունդ, հազուստ և կացարան ստանաք կամ որ Դուք տեղյակ եք, թե ինչպես պետք է դրանց համար օգնություն ստանալ: Դուք ստիպված չեք ապացուցել, որ այս ամենը կարող եք ինքներդ անել: Եթե Դուք ինչ-որ մեկն ունեք, ով կարող է օգնել Ձեր հիմնական կարիքները հոգալու, խնդրեք նրան բացատրել հաստատությանը կամ դատարանին, եթե հնարավոր է գրավոր, նրա՝ Ձեր հետ ունեցած հարաբերությունը և այն, թե նա ինչպես է կարողանում օգնել:

Յուզող ընդհանուր ակնարկներ՝ ի նկատի ունենալու համար

Եթե Դուք ճանաչում եք մեկին, ով կարող է Ձեզ օգնել բուժման կամ Ձեր հիմնական կարիքների հարցում, կամ ով կարող է բացատրել, թե ինչու կարիք չկա, որ Դուք հոսպիտալացվեք, օգտակար կլինի նրա հետ կապ հաստատելը: Նա կարող է լինել ընկեր, ընտանիքի անդամ, բժիշկ կամ որևէ մեկը, ով կարող է օգնել: Եթե Դուք ճանաչում եք ինչ-որ մեկին, ով Ձեզ օգնում է, կամ ով մատչելի և պատրաստակամ է Ձեզ օգնել, ապա նա պետք է դատարանին նամակ ներկայացնի՝ դա հաստատելու համար: **Դատարանը հաշվի չի առնի ինչ-որ մեկի օգնելու ունակությունը, եթե դա գրավոր չհաստատվի:** § 5250(d)(2): Սակայն հիվանդանոցը կարող է ցանկանալ խոսել հեռախոսով ինչ-որ մեկի հետ: Այս տեղեկատվությունը ունենալը նույնպես կարևոր է Ձեր՝ հիվանդների իրավունքների դատապաշտպանի կամ փաստաբանի համար: Եթե Դուք լսում ունեք առ այն, թե արդյոք պետք է 72 ժամից ավելի ձերբակալված մնաք, այս անձը կամ տեղեկատվությունը, որը նրանք կտրամադրեն, կարող է օգնել լսման պատասխանատուին կամ դատավորին՝ իր որոշումը կայացնելիս:

Հիվանդանոցում եղած ժամանակ հավանաբար Դուք այլ անձնաց հետ կլինեք, ովքեր նույնպես բուժվում են կամ ձերբակալվել են հոգեկան հիվանդության պատճառով: Հարգեք նրանց գաղտնիության իրավունքը և անձնական տարածքը, հատկապես բուժքույրերի սենյակների, մեկուսարանների, հեռախոսի, հեռուստացույցի մոտ և երբ նրանք սնվում են:

Հիվանդանոցը կարող է զբաղմունքի հնարավորություն ընձեռել, երբ Դուք այնտեղ եք: Թեև հնարավոր է, որ Ձեզնից չպահանջվի մասնակցել, բայց այդպես վարվելով կարող եք անձնակազմին ցույց տալ, որ Դուք կարող եք ապահով կերպով շփվել մարդկանց հետ: Այս զբաղմունքները կարող են օգնել Ձեզ՝ նվազեցնել սթրեսը կամ շեղել Ձեզ Ձեր ազատագրկումից:

Մենք ցանկանում ենք լսել Ձեզ: Խնդրում ենք լրացնել մեր հրապարակումներին վերաբերող հետևյալ հարցումը և մեզ տեղեկացնել, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Լրացնել հարցումը\]](#)

Իրավաբանական աջակցության համար զանգահարեք 800-776-5746 կամ լրացրեք աջակցության [խնդրանքի ձևաթուղթ](#): Մացած բոլոր նպատակներով զանգահարեք՝ 916-504-5800 հեռախոսահամարով (Չյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա):

Disability Rights California-ն ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկի համար այցելե՛ք՝ <http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html>.